

ԹԵՄԱ 2.

ՀՀ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Բովանդակություն

ՏԻ համակարգի էությունը	2
Համայնքի խնդիրները.....	3
Տեղական ինքնակառավարման սկզբունքները	4
ՏԻՄ-երի ընդհանուր նկարագիրը և լիազորությունները	5
Համայնքի ավագանի	6
Համայնքի ղեկավար	7
Լիազորությունների բաշխումը համայնքի ավագանու և ղեկավարի միջև	8
ՏԻՄ-երի ընտրության կարգն ու ներկայացվող պահանջները	11
Համայնքի ավագանի	12
Համայնքի ղեկավար	13
ՏԻՄ-երի փոխհարաբերությունները	13
Տեղական ինքնակառավարման առանձնահատկությունները	
Գյումրի և Վանաձոր համայնքներում	15
Գրականություն	18

ՏԻ համակարգի էությունը

Հայաստանի Հանրապետությունում (ՀՀ) տեղական ինքնակառավարման (ՏԻ) համակարգի կազմավորման հիմքերն առաջին անգամ դրվեցին 1995թ. հուլիսի 5-ին ընդունված ՀՀ Սահմանադրությամբ: Մեկ տարի անց «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի ընդունմամբ հանրապետությունում սկիզբ դրվեց պետության կառավարման ապակենտրոնացման ռազմավարության իրագործմանը և ՏԻ համակարգի ձևավորմանը: Հատկանշական է, որ ՏԻ համակարգը մինչ օրս անցել է կայացման երկար ուղի, սակայն զարգացման և բարեփոխումների գործընթացը, որը պայմանավորված է փոփոխվող իրողություններով, շարունակական է և անընդհատ:

Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիան (ՏԻԵԽ), որը ՀՀ-ն վավերացրել է 2002թ.-ին, ՏԻ-ը սահմանում է որպես՝

տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ-երի) իրավունքը և կարողությունը՝ կարգավորելու և կառավարելու պետական գործերի զգալի մասը (օրենքի շրջանակներում)՝ սեփական պատասխանատվությամբ և տեղական բնակչության շահերից ելնելով:՝

Համանման սահմանում է տալիս նաև «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը՝

Տեղական ինքնակառավարումը ՏԻՄ-երի իրավունքն ու կարողությունն է համայնքի բնակիչների շահերից ելնելով, Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան, սեփական պատասխանատվությամբ լուծելու համայնքային նշանակության հանրային հարցերը:

Տեղական ինքնակառավարումն իրականացվում է համայնքներում:

Տեղական ինքնակառավարումն իրականացվում է ՀՀ ամբողջ տարածքում:²

ՀՀ-ում ձևավորվել և գործում է միամակարդակ ՏԻ համակարգ, որն իրականացվում է միայն համայնքների մակարդակով: Համայնքը մեկ կամ մի քանի բնակավայրերի բնակիչների հանրություն է և վարչատարածքային միավոր:³

Համադրելով վերոնշյալ երկու սահմանումները՝ կարող ենք ասել, որ ՏԻ-ը տեղական գործերի կառավարման այնպիսի համակարգ է, որն իրականացվում է տվյալ վարչատարածքային միավորների բնակչության կողմից ընտրված մարմինների միջոցով: Վերջիններիս գործունեությունը պետք է նպատակաուղղված լինի համայնքային նշանակության կարևորագույն **խնդիրների** լուծմանը՝ ապահովելով համայնքի բնականոն կյանքի ընթացքը:

¹ Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիա, հոդված 3

² «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 3

³ ՀՀ Սահմանադրություն (2015թ. փոփոխություններով), հոդված 180

Համայնքի խնդիրները

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը սահմանում է **համայնքի պարտադիր և կամավոր խնդիրները**: Եթե պարտադիր խնդիրների ցանկը հստակորեն ներկայացված է վերոնշյալ օրենքում, ապա կամավոր խնդիրները սահմանվում են յուրաքանչյուր համայնքի ՏԻՄ-երի կողմից. ըստ էության, վերջիններս կարող են իրականացնել համայնքային շահերին վերաբերող և օրենքին չհակասող ցանկացած գործունեություն, եթե այն օրենքով վերապահված չէ պետական մարմիններին: Պետք է նշել, որ համայնքի պարտադիր խնդիրները ենթակա են առաջնահերթ կատարման, իսկ կամավոր խնդիրները իրականացվում են, պարտադիր խնդիրների իրագործման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցներից բացի, համայնքի բյուջեի հավելյալ միջոցների առկայության դեպքում:

Ըստ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի հոդված 12-ի՝ համայնքի պարտադիր խնդիրներն են՝

Ներդիր 1. Համայնքի պարտադիր խնդիրները

- համայնքի կայուն զարգացումը.
- գործարար միջավայրի բարելավումը և ձեռնարկատիրության խթանումը.
- համայնքի գույքի կառավարումը.
- նախադպրոցական կրթության և արտադպրոցական դաստիարակության կազմակերպումը.
- համայնքի մշակութային կյանքի կազմակերպումը.
- համայնքի բնակչության սոցիալական պաշտպանությունը.
- համայնքում մարզական կյանքի կազմակերպումը, ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսումը.
- համայնքում բնակարանային շինարարության խթանումը.
- համայնքի բնակավայրերի կառուցապատումը, բարեկարգումը և կանաչապատումը, համայնքի աղբահանությունը և սանիտարական մաքրումը, կոմունալ տնտեսության աշխատանքների ապահովումը, ինչպես նաև համայնքային գերեզմանատների պահպանումը և գործունեության ապահովումը.
- համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքի կազմակերպումը, համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանումը և շահագործումը.
- պետության պաշտպանության իրականացման աջակցումը.
- աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումների կազմակերպումը և իրականացումը.
- համայնքներում գյուղատնտեսության զարգացման խթանումը.
- համայնքում շրջակա միջավայրի պահպանությունը.
- համայնքներում զբոսաշրջության զարգացման խթանումը.
- համայնքի երիտասարդության խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների կազմակերպումը.
- համայնքում ծնելիության և բազմազավակության խթանումը.
- համայնքում բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի իրականացումը, արդյունավետ և մատչելի առաջնային բժշկական սպասարկման պայմանների ստեղծումը.
- համայնքի հասարակական կյանքին հաշմանդամների մասնակցության խթանումը.
- բարեգործության խթանումը՝ համայնքում մշակութային, կրթական, գիտական, առողջապահական, մարզական, սոցիալական և այլ հաստատությունների հիմնադրման, ֆինանսավորման, ինչպես նաև դրանց ֆինանսական անկախության ապահովման նպատակով:

Վերոնշյալ պարտադիր խնդիրները համայնքի կենսական նշանակության կարևորագույն հիմնահարցեր են, որոնց լուծմանն ուղղված միջոցառումները ապահովում են համայնքի գոյությունն ու հետագա զարգացումը:

Տեղական ինքնակառավարման սկզբունքները

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված են ՏԻ մի շարք սկզբունքներ, որոնք արտահայտում են ՏԻԵԽ-ի պահանջները և բխում են դրանցից: Այդ սկզբունքներն են՝⁴

Ներդիր 2. ՏԻ սկզբունքները

1. Ընդհանուր իրավասությունը.
2. Տեղական ինքնակառավարման իրավունքի իրականացումը՝ ինքնուրույն և սեփական պատասխանատվությամբ, ընդհանուր, հավասար, ազատ ընտրական իրավունքի հիման վրա ընտրված ՏԻՄ-երի միջոցով.
3. Պետական մարմինների լիազորությունների փոխանցումը ՏԻՄ-երին, եթե այդ լիազորություններն առավել արդյունավետ կարող են իրականացվել համայնքներում.
4. Համայնքի իրավունքների, օրինական շահերի և սեփականության՝ օրենքով սահմանված կարգով պաշտպանությունը.
5. ՏԻՄ-երի լիազորությունների ամբողջականությունն ու բացառիկությունը.
6. Համայնքների սահմանների փոփոխությունների իրականացումն օրենքով սահմանված կարգով՝ հանրային շահերից ելնելով, լսելով համայնքի կարծիքը.
7. Տեղական ինքնակառավարման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով այլ համայնքների հետ համագործակցելը և միջհամայնքային միավորումներ ստեղծելը.
8. ՏԻՄ-երի ներքին կառուցվածքների համապատասխանեցումը համայնքային խնդիրների լուծմանը.
9. ՏԻՄ-երի գործունեության նկատմամբ իրավական և մասնագիտական հսկողության համաչափությունը.
10. ՏԻՄ-երի պարտադիր խնդիրների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների համապատասխանությունը.
11. Համայնքների բյուջեների ինքնուրույնությունը.
12. Համայնքների ֆինանսական հնարավորությունների միջև առկա տարբերությունների նվազեցման նպատակով ֆինանսական համահարթեցման միջոցով աջակցությունը.
13. ՏԻՄ-երի գործունեության հաշվետվողականությունը, հրապարակայնությունն ու թափանցիկությունը.
14. Տեղական ինքնակառավարմանը համայնքի բնակիչների մասնակցությունը:

Եթե փորձենք համապարփակ կերպով արտահայտել վերոնշյալ սկզբունքների էությունը, կարող ենք եզրակացնել, որ ՀՀ ՏԻ կարևոր բնորոշ հատկանիշներից է ՏԻՄ-երի ընտրովիությունը և դրանից բխող տեղական հարցերի լուծման գործում նշանակալի ինքնուրույնությունը: Սա նշանակում է, որ ոչ մի այլ մարմին իրավասու չէ հանձնարարություններ տալ նրանց և պահանջել դրանց կատարումը, ՏԻՄ-երը պատասխանատու են միայն իրենց ընտրողների՝ համայնքի բնակչության առջև: ՏԻՄ-երն իրավունք ունեն զբաղվելու համայնքային շահերին վերաբերող ցանկացած հարցով,

⁴ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 8

եթե օրենքով այլ բան նախատեսված չէ: Այս ինքնուրույնությունը հենվում է մունիցիպալ սեփականության, տեղական հարկերի հավաքագրման, ինչպես նաև ինքնուրույն նորմատիվ իրավական ակտերի ընդունման իրավունքի և կարողության վրա:

Ապակենտրոնացնելով պետական իշխանության որոշ գործառույթներ՝ տեղական կյանքին վերաբերող որոշումների կայացման մի մասը կենտրոնական իշխանությունը փոխանցում է ՏԻՄ-երին, դրանով իսկ նպաստելով բնակիչների ու քաղաքացիական կազմակերպությունների ու խմբերի ակտիվությանը և ապահովելով վերջիններիս իրական մասնակցությունը և ազդեցությունը այդ որոշումների կայացման վրա:

ՏԻՄ-երը պարտավոր են ապահովել իրենց գործունեության թափանցիկությունը, հրապարակայնությունը ու հաշվետվողականությունը, իսկ համայնքի բնակիչներն էլ պետք է հնարավորություն ունենան ներկա գտնվելու համայնքում անցկացվող բազմաբնույթ քննարկումներին ու ավագանու նիստերին, ինչպես նաև այս կամ այն հարցի վերաբերյալ արտահայտելու իրենց կարծիքներն ու առաջարկությունները, այդպիսով՝ ակտիվորեն մասնակցելով համայնքային գործերի կառավարմանը:

ՏԻՄ-երը պետք է ապահովված լինեն իրենց լիազորություններն ու գործառույթներն իրականացնելու համար սոցիալ-տնտեսական անհրաժեշտ ենթակառուցվածքներով ու բավարար ֆինանսական միջոցներով: Ուստի և, պետության կարևորագույն խնդիրներից մեկը պետք է լինի համայնքների ֆինանսական հնարավորությունների միջև առկա տարբերությունների նվազեցումը և զարգացման հավասար պայմանների ապահովումը:


ՏԻՄ-երի ընդհանուր նկարագիրը և լիազորությունները

ՏԻ-ն իրականացնելու և համայնքային խնդիրները լուծելու նպատակով համայնքներում ընտրվում են ՏԻՄ-երը, որոնք սովորաբար կազմված են լինում ընտրովի մունիցիպալ խորհրդից և գործադիր մարմնից, ընդ որում՝ վերջիններիս կազմավորման կարգը երկրից երկիր տարբերվում է: Մասնավորապես, գործադիր մարմինը կարող է ձևավորվել վերոնշյալ մունիցիպալ խորհրդի կողմից, կարող է ուղղակիորեն ընտրվել բնակչության կողմից և նույնիսկ նշանակվել կենտրոնական իշխանության մարմինների կողմից: Շատ դեպքերում նույնիսկ մեկ երկրի սահմաններում կարող են գործել սկզբունքորեն իրարից տարբերվող մի քանի մոդելներ: Այս առանձնահատկությունը, թերևս, հատուկ է դաշնային պետություններին, որտեղ ՏԻՄ-երի կազմավորմանը վերաբերող օրենսդրությունը վերագրվում է դաշնության կառավարման սուբյեկտների լիազորություններին:

«Վ-ում ՏԻՄ-երն են համայնքի **ավագանին** և **ղեկավարը**, որոնք ընտրվում են համայնքի բնակիչների կողմից (բացի Երևան, Գյումրի և Վանաձոր համայնքների) **5 տարի ժամկետով**: Համայնքի ավագանին ներկայացուցչական մարմին է, իսկ

ղեկավարը՝ համայնքի գործադիր մարմին, որոնք երկուսն էլ իրենց գործունեությունն իրականացնում են ՀՀ Սահմանադրությամբ, «Տեղական ինքնակառավարման մասին» և այլ օրենքներով սահմանված լիազորությունների շրջանակներում (գծապատկեր 1):

Գծապատկեր 1. ՏԻՄ-երի կազմավորումը⁵



Համայնքի ավագանի

Համայնքի ավագանին օրենքով սահմանված կարգով ընտրված ներկայացուցչական մարմին է: Այն իր գործունեությունն իրականացնում է իր կողմից ընդունված ավագանու կանոնակարգին համապատասխան⁶ նիստերի միջոցով, որոնք իրավիրվում են ոչ պակաս քան երկու ամիսը մեկ անգամ: Կարող են անցկացվել նաև արտահերթ նիստեր՝ համայնքի ղեկավարի (կամ նրա պաշտոնակատարի), ավագանու անդամների՝ օրենքով սահմանված թվի առնվազն մեկ երրորդի նախաձեռնությամբ: Համայնքի ավագանին իրեն վերապահված լիազորությունների արդյունավետ իրականացման համար՝

- **կարող է** իր որոշմամբ ստեղծել մշտական գործող կամ ժամանակավոր հանձնաժողովներ՝ մինչև ավագանու 9 անդամ ունեցող համայնքներում,
- **ստեղծում է** մշտական, իսկ անհրաժեշտություն առաջանալու դեպքում՝ ժամանակավոր հանձնաժողովներ՝ ավագանու 9 և ավելի անդամ ունեցող համայնքներում:⁷

Համայնքի ավագանու նիստում կարող է քննարկվել ցանկացած հարց, որն առնչվում է համայնքի շահերին, իսկ քննարկման արդյունքում ընդունվում են որոշումներ, որոնք ենթակա են պարտադիր կատարման համայնքի տարածքում: Համայնքային շահերին վերաբերող, բայց վերջինիս իրավասությունից դուրս գտնվող հարցերի վերաբերյալ ավագանին կարող է ընդունել ուղերձներ՝ ուղղված համայնքի բնակչությանը, համայնքի ղեկավարին, մարզպետին, որևէ այլ պետական մարմնի կամ

⁵ Բացի Երևան, Գյումրի և Վանաձոր համայնքների

⁶ Տե՛ս «Ավագանու կանոնակարգ», հասանելի է հետևյալ հղումով՝ <http://www.mtad.am/files/docs/322.pdf>

⁷ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 13

կազմակերպության: Ավագանու նիստում որոշումներն ընդունվում են ձայների մեծամասնությամբ:

Համայնքի ավագանու նիստը դռնբաց է, և համայնքի յուրաքանչյուր բնակիչ իրավունք ունի ներկա գտնվելու և իր կարծիքն ու առաջարկությունները ներկայացնելու քննարկվող հարցերի վերաբերյալ: Առանձին դեպքերում, ավագանու նիստին ներկա անդամների ձայների երկու երրորդի որոշմամբ, կարող է իրականացվել դռնփակ նիստ:

Համայնքի ղեկավար

Համայնքի ղեկավարը համայնքի գործադիր մարմինն է, ներկայացնում է համայնքը և իրականացնում է ՀՀ Սահմանադրությամբ, «Տեղական ինքնակառավարման մասին» և ՀՀ այլ օրենքներով նախատեսված լիազորությունները: Իր գործունեությունը համայնքի ղեկավարն իրականացնում է հայեցողական պաշտոն զբաղեցնող անձանց, համայնքապետարանի աշխատակազմի, համայնքային հիմնարկների և ոչ առևտրային կազմակերպությունների միջոցով:

Համայնքի ղեկավարն ունի տեղակալ, որը վերջինիս բացակայության ժամանակ իրականացնում է ղեկավարի իրավասությանը վերապահված գործառույթներ:

Կարևոր է նշել, որ բազմաբնակավայր համայնքների (մեկից ավելի բնակավայրերից բաղկացած) կազմում ընդգրկված յուրաքանչյուր բնակավայր, բացառությամբ համայնքի կենտրոն հանդիսացող բնակավայրի, ունի մեկական **վարչական ղեկավար:**

Վարչական ղեկավարը նշանակվում է համայնքի ղեկավարի կողմից, բնակավայրի տարածքում գործում վերջինիս անունից: Նա իրականացնում է մի շարք կարևորագույն գործառույթներ, ինչպիսիք են՝

- հետևում է բնակավայրի տարածքում մատուցվող հանրային ծառայությունների իրականացմանը և այդ մասին տեղեկություններ է ներկայացնում համայնքի ղեկավարին,
- մասնակցում է ավագանու նիստերին,
- առաջարկություններ է ներկայացնում ավագանու նիստերի օրակարգի և քննարկվող հարցերի վերաբերյալ և այլն:⁸

Վարչական ղեկավարի գործունեության համար պատասխանատու մարմինը համայնքի ղեկավարն է: Կարող ենք ասել, որ վարչական ղեկավարը ապահովում է բնակավայրի շահերի ներկայացվածությունը բազմաբնակավայր համայնքում և հանդիսանում է «համայնքի ղեկավար-բնակչություն» փոխհարաբերությունների միջնորդ:

⁸ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 32

**Լիազորությունների բաշխումը
համայնքի ավագանու և ղեկավարի միջև**

Համայնքի ղեկավարի և ավագանու միջև լիազորությունների արդյունավետ և նպատակային բաշխումը և **միմյանց հակակշիռ լինելու** առանձնահատկությունը համայնքում արդյունավետ ՏԻ իրականացնելու կարևորագույն նախադրյալներից է:

Համայնքի ներկայացուցչական մարմինը մշակում և սահմանում է որոշակի կանոններ և նորմեր, իսկ գործադիր մարմինը, վերջինիս կողմից սահմանված առաջնահերթությունների ու սահմանափակումների հիման վրա, համայնքի ռեսուրսների միանձնյա տնօրինման միջոցով իրականացնում է բուն համայնքային գործունեությունը:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը հստակ ամրագրում է ՏԻՄ-երին վերապահված լիազորությունների շրջանակը: Այսպես, աղյուսակ 1-ում արտացոլված են ՏԻՄ-երի մի շարք կարևորագույն լիազորություններ՝ միմյանց համեմատելի տեսքով.

Աղյուսակ 1. ՀՀ ՏԻՄ-երի լիազորությունների բաշխումը⁹

Համայնքի ավագանու լիազորությունները	Համայնքի ղեկավարի լիազորությունները
Հաստատում է համայնքի զարգացման ծրագրերը	Համայնքի զարգացման ծրագրերը ներկայացնում է ավագանու հաստատմանը
հաստատում է համայնքի բյուջեն, բյուջեի՝ համայնքի ղեկավարի առաջարկած փոփոխությունները և բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը, վերահսկում է համայնքի բյուջեի կատարումը և համայնքի ստացած վարկերի ու այլ ներգրավված ֆինանսական միջոցների օգտագործումը	կազմում է համայնքի բյուջեի նախագիծը՝ համայնքի զարգացման հնգամյա ծրագրով՝ տվյալ բյուջետային տարվա հիմնախնդիրների լուծման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների պլանավորման հիման վրա
համայնքի ղեկավարի ներկայացմամբ որոշում է ընդունում աշխատակազմի, համայնքային հիմնարկների, համայնքային ենթակայությամբ առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների կանոնադրությունները, կառուցվածքը, աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու վերաբերյալ	համայնքի բյուջեի կատարման պատասխանատուն է
համայնքի ղեկավարի ներկայացմամբ որոշում է ընդունում աշխատակազմի, համայնքային հիմնարկների, համայնքային ենթակայությամբ առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների կանոնադրությունները, կառուցվածքը, աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու վերաբերյալ	աշխատակազմի և համայնքային հիմնարկների, համայնքային ենթակայությամբ առևտրային և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատողների քանակի, հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերի վերաբերյալ որոշման նախագծերն ու դրանցում առաջարկվող փոփոխությունները ներկայացնում է ավագանու հաստատմանը
իր անդամների առնվազն մեկ երրորդի կամ համայնքի ղեկավարի նախաձեռնությամբ ընդունում է հանրաքվե անցկացնելու մասին որոշում	հանդես է գալիս տեղական հանրաքվե նշանակելու նախաձեռնությամբ
իր որոշմամբ վավերացնում է համայնքի կողմից ՀՀ համայնքների կամ այլ պետությունների համայնքների հետ կնքված պայմանագրերը	կնքում է ՀՀ համայնքների կամ այլ պետությունների համայնքների հետ պայմանագրերը, դրանք ներկայացնում է համայնքի ավագանու վավերացմանը


⁹ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդվածներ 18, 35 և «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, հոդվածներ 31, 33

<p>որոշում է կայացնում միջհամայնքային միավորումներ ստեղծելու մասին, ինչպես նաև առաջարկություն է ներկայացնում պետական լիազորված մարմին՝ այլ համայնքների հետ միավորվելով նոր համայնք ձևավորելու վերաբերյալ</p>	<p>ավագանու հաստատմանն է ներկայացնում միջհամայնքային միավորում ստեղծելու, ինչպես նաև համայնքների հիմնադրած միություններին անդամակցելու և դրանց անդամավճարները մուծելու մասին որոշման նախագծերը</p>
<p>որոշում է կայացնում միջհամայնքային միավորումում իր ներկայացուցիչը նշանակելու վերաբերյալ</p>	
<p>օրենքով սահմանված կարգով որոշում է կայացնում համայնքային հիմնարկների, համայնքի մասնակցությամբ առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների հիմնադրման, վերակազմակերպման կամ լուծարման մասին</p>	<p>համայնքային հիմնարկների և ոչ առևտրային կազմակերպությունների ստեղծման, վերակազմակերպման կամ լուծարման մասին որոշման նախագիծը ներկայացնում է ավագանու հաստատմանը</p>
<p>համայնքի ղեկավարի առաջարկությամբ որոշում է կայացնում համայնքի սեփականություն հանդիսացող գույքն օգտագործման տրամադրելու կամ օտարելու մասին</p>	<p>առաջարկություն է ներկայացնում համայնքի ավագանուն՝ համայնքի սեփականություն հանդիսացող գույքն օտարելու կամ օգտագործման տրամադրելու մասին</p> <p>համայնքի ավագանու որոշմամբ և սահմանած պայմաններով օտարում կամ օգտագործման է տրամադրում համայնքի սեփականություն հանդիսացող գույքը</p>
<p>որոշում է կայացնում համայնքային նշանակության փողոցների, պողոտաների, հրապարակների, զբոսայգիների, համայնքային ենթակառուցվածքային կրթական, մշակութային և այլ կազմակերպությունների անվանման և վերանվանման վերաբերյալ</p>	<p>համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացնում համայնքի անվանման և վերանվանման ենթակա փողոցները, պողոտաները, հրապարակները, զբոսայգիները, համայնքային ենթակառուցվածքային կրթական, մշակութային և այլ հիմնարկներն ու կազմակերպությունները</p>
<p>որոշում է կայացնում համայնքների ավագանիների կողմից, իրենց կանոնակարգերին համապատասխան, ՀՀ և օտարերկրյա քաղաքացիներին համայնքի պատվավոր քաղաքացու կոչում շնորհելու կամ պատվավոր կոչումից զրկելու վերաբերյալ</p>	<p>համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացնում առաջարկ՝ ՀՀ և օտարերկրյա քաղաքացիներին համայնքի պատվավոր քաղաքացու կոչում շնորհելու վերաբերյալ.</p>
<p>իր որոշմամբ համաձայնություն է տալիս համայնքի ղեկավարի ներկայացրած՝ համայնքային հիմնարկների և ոչ առևտրային կազմակերպությունների ղեկավարների թեկնածուներին և այլն...</p>	<p>համայնքի ավագանու որոշմամբ նշանակում և ազատում է համայնքային հիմնարկների և կազմակերպությունների ղեկավարներին և այլն...</p>

ՏԻՄ-երի լիազորությունները բաժանվում են երկու խմբի (գծապատկեր 2)՝

1. **սեփական՝** համայնքի պարտադիր և կամավոր խնդիրների լուծման նպատակով,
2. **պետության կողմից պատվիրակված՝** պետական կառավարման մարմինների լիազորությունների առավել արդյունավետ իրականացման նպատակով

Գծապատկեր 2. ՀՀ ՏԻՄ-երի լիազորությունները



«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում, բացի համայնքի ավագանու և ղեկավարի ընդհանուր լիազորություններից, թվարկված են նաև համայնքի ղեկավարի լիազորություններն ըստ առանձին բնագավառների (թվով՝ 17), ընդ որում՝ յուրաքանչյուր բնագավառում և՛ սեփական, և՛ պատվիրակված¹⁰:

ՏԻՄ-երի **սեփական լիազորությունները** բացառապես ուղղված են համայնքի պարտադիր խնդիրների լուծմանը: ՏԻՄ-երի սեփական լիազորությունների օրինակներ են՝

- քաղաքացիների ընդունելության կատարումը,
- օրենքով սահմանված կարգով քաղաքացիների հանրագրերի, դիմումների ու բողոքների քննության առնումը, համապատասխան միջոցների ձեռնարկումը,
- համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքն ու համայնքային ենթակայության տրանսպորտային կազմակերպությունների գործունեության կազմակերպումը,
- համայնքի տարածքում բացօթյա վաճառք, տոնավաճառներ կազմակերպելու թույլտվության տրամադրումը,
- աղբահանության և սանիտարական մաքրման կազմակերպումը,
- նախադպրոցական կրթության և արտադպրոցական դաստիարակության իրականացումը,
- համայնքի սեփականություն հանդիսացող հողերի և դրանց վրա գտնվող համայնքային նշանակության բնության հատուկ պահպանվող տարածքների և անտառների պահպանությունը,
- և այլն:

ՏԻ սկզբունքներին համապատասխան՝ պետական կառավարման մարմինների լիազորությունների իրականացումը կարող է փոխանցվել համայնքներին, եթե վերջիններիս կողմից դրանց իրականացումը կարող է ավելի արդյունավետ լինել: Հենց այդ լիազորություններն էլ կազմում են **պատվիրակված լիազորությունների** ցանկը: Դրանք իրականացվում են օրենքով կամ ՀՀ կառավարության կողմից սահմանված

¹⁰ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդվածներ 36-52

կարգով: Պետության կողմից պատվիրակված լիազորությունները ենթակա են համայնքի կողմից առաջնահերթ կատարման, դրանք ամբողջովին և պարտադիր պետք է ֆինանսավորվեն ՀՀ պետական բյուջեի միջոցներից՝ հատուկ այդ նպատակով նախատեսված հատկացումների հաշվին: Պետության կողմից ՏԻՄ-երին պատվիրակված լիազորությունների օրինակներ են՝

- համայնքում քաղաքացիական կացության ակտերի գրանցման ծառայության գործունեության կազմակերպումը,
- զոհված զինծառայողների ընտանիքների, հաշմանդամ զինծառայողների սոցիալական խնդիրների լուծման աջակցությունը,
- փրկարարական աշխատանքների կազմակերպումը,
- համայնքային ենթակայության ճանապարհների երթևեկության նշանների տեղակայման ու հանման հաստատումն ու թույլատրումը,
- ՀՀ տոների և հիշատակի օրերի հետ կապված միջոցառումների իրականացումը,
- համայնքի տարածքում իրականացվող վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելիչ և սանիտարահակահամաճարակային աշխատանքների աջակցությունը,
- և այլն:

ՏԻՄ-երի ընտրության կարգն ու ներկայացվող պահանջները

Համաձայն ՀՀ ընտրական օրենսգրքի՝ համայնքի ավագանու անդամության և ղեկավարի թեկնածու կարող են առաջադրվել **18 տարին լրացած** տվյալ համայնքի բնակչության ռեզիստրում՝

1. մինչև քվեարկության օրն առնվազն 6 ամսվա հաշվառում ունեցող ՀՀ քաղաքացիները,
2. մինչև քվեարկության օրն առնվազն 6 ամսվա հաշվառում չունեցող ՀՀ այն քաղաքացիները, որոնք համայնքում հաշվառվել են պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից զորացրվելու կամ ազատագրվման ձևով պատիժը կրելուց ազատվելու հանգամանքներով պայմանավորված,
3. մինչև քվեարկության օրն առնվազն 1 տարվա հաշվառում ունեցող՝ ՀՀ քաղաքացիություն չունեցող անձինք:

Համայնքի ղեկավարի և ավագանու անդամի թեկնածուներ կարող են առաջադրել ինչպես **կուսակցությունները (կուսակցությունների դաշինքները)**, այնպես էլ ընտրվելու իրավունք ունեցող **անհատ անձինք՝ ինքնաառաջադրման կարգով**: Համայնքը դիտարկվում է որպես մեկ ընտրատարածք և ընտրություններում հաղթող են ճանաչվում առավելագույն թվով ձայներ ստացած թեկնածուները: Համայնքի ղեկավարի ընտրության ժամանակ համայնքի տարածքում կազմավորվում է **միամանդատ մեծամասնական** ընտրատարածք, իսկ ավագանու ընտրությունների ժամանակ՝ մեկ **բազմամանդատ մեծամասնական** ընտրատարածք: Ընդհանրապես, համայնքի ղեկավարի և ավագանու հերթական ընտրությունները տեղի են ունենում միաժամանակ:

Ավագանու անդամության և համայնքի ղեկավարի թեկնածու առաջադրվելու համար **չկան կրթական կամ մասնագիտական սահմանափակումներ**: Նույն անձը

կարող է առաջադրվել և ընտրվել ավագանու անդամ կամ համայնքի ղեկավար **անսահմանափակ** թվով անգամ:

Համայնքի ղեկավարի և ավագանու անդամի թեկնածու **չեն կարող** առաջադրվել դատավորները, դատախազները, քննչական կոմիտեի, հատուկ քննչական, դատական ակտերի հարկադիր կատարման, ոստիկանության, ազգային անվտանգության, հարկային, մաքսային մարմինների, քրեակատարողական, պրոբացիայի, փրկարար ծառայությունների ծառայողները, զինծառայողները, ընտրական հանձնաժողովների անդամները:

Համայնքի ավագանի

Համայնքի ավագանու անդամի թեկնածուներն ունեն հավասար իրավունքներ և ընտրվում են միաժամանակ: Ավագանին կազմավորված է համարվում, եթե ընտրվել են դրա անդամների՝ օրենքով սահմանված թվի առնվազն երկու երրորդը:

Ավագանին, համայնքի բնակչության թվից կախված, կարող է ունենալ՝

- 5 անդամ՝ մինչև 1000 ընտրող ունեցող համայնքում,
- 7 անդամ՝ 1000-ից մինչև 2000 ընտրող ունեցող համայնքում,
- 9 անդամ՝ 2000-ից մինչև 4000 ընտրող ունեցող համայնքում,
- 11 անդամ՝ 4000-ից մինչև 10 000 ընտրող ունեցող համայնքում,
- 15 անդամ՝ 10 000-ից մինչև 70 000 ընտրող ունեցող համայնքում,
- 33 անդամ՝ 70 000-ից ավելի ընտրող ունեցող համայնքում:¹¹

Ավագանու անդամներն իրենց օրենքով վերապահված լիազորություններն իրականացնում են **հասարակական հիմունքներով**: Նրանք չեն կարող միաժամանակ՝

- զբաղեցնել որևէ պաշտոն աշխատակազմում և համայնքային ենթակայության կազմակերպություններում,
- լինել համայնքի ղեկավար, համայնքի ղեկավարի պաշտոնակատար կամ վարչական ղեկավար,
- աշխատել իրավապահ, ազգային անվտանգության և դատական մարմիններում:

Համայնքի ավագանու անդամը իր պարտականությունների կատարման հետևանքով առաջացած ծախսերի դիմաց իր ցանկությամբ և ավագանու որոշմամբ կարող է ստանալ ամսական դրամական փոխհատուցում՝ ՀՀ Ազգային ժողովի պատգամավորի ամենամսյա պատգամավորական ծախսերի¹² մինչև 30 տոկոսի չափով:

¹¹ ՀՀ ընտրական օրենսգիրք, հոդված 105

¹² Տե՛ս «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքը, հոդված 11

Համայնքի ղեկավար

Համայնքի ղեկավարը **չի կարող** զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, զբաղեցնել այլ պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում կամ առևտրային կազմակերպություններում, կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից:

Համայնքի ղեկավարի պաշտոնային դրույքաչափը սահմանվում է ՀՀ Ազգային ժողովի պատգամավորի պաշտոնային դրույքաչափի նկատմամբ հետևյալ տոկոսաչափերով՝

- մինչև 1000 բնակիչ ունեցող համայնքի ղեկավարի համար՝ մինչև 42.57%,
- 1001-ից մինչև 5000 բնակիչ ունեցող համայնքի ղեկավարի համար՝ մինչև 52.06%,
- 5001-ից մինչև 20000 բնակիչ ունեցող համայնքի ղեկավարի համար՝ մինչև 66.55%,
- 20001-ից մինչև 75000 բնակիչ ունեցող համայնքի ղեկավարի համար՝ մինչև 71.04%,
- 75000-ից ավելի բնակիչ ունեցող համայնքի ղեկավարի համար՝ մինչև 85.52%:

ՏԻՄ-երի փոխհարաբերությունները

Օրենսդիրը հաշվի է առել համայնքի ավագանու և ղեկավարի լիազորություններում հակակշիռ ստեղծելու խնդիրը, ինչը չափազանց կարևոր է, մասնավորապես, երբ խոսքը գնում է ավագանու ընդունած որոշումների վերաբերյալ համայնքի ղեկավարի **անհամաձայնությանը** և հակառակը:

Դրա մասին է վկայում օրենքի հետևյալ դրույթը¹³

Ներդիր 3. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 16

«Համայնքի ավագանու որոշումների վերաբերյալ համայնքի ղեկավարը եռօրյա ժամկետում ավագանուն կարող է ներկայացնել զրավոր առարկություններ և առաջարկություններ՝ համապատասխան հիմնավորումներով, եթե ավագանու որոշումը, իր կարծիքով, հակասում է ՀՀ Սահմանադրությանը, օրենքներին կամ ավագանու նախկին որոշումներին: Եթե համայնքի ղեկավարն ավագանու որոշման դեմ առարկում է, ապա եռօրյա ժամկետում հրավիրում է ավագանու արտահերթ նիստ, իսկ որոշման կատարումը հետաձգվում է մինչև այդ նիստում ավագանու կողմից դրա քննարկումը»:

Ավագանին քննարկում է նշված առարկությունները և որոշում է ընդունում նիստին ներկա ավագանու անդամների ձայների մեծամասնությամբ: Նշված նիստում և նախատեսված ժամկետներում որոշումը չվերանայելու կամ ավագանու նիստը չկայանալու դեպքում որոշումն ուժի մեջ է մտնում և ենթակա է պարտադիր կատարման: Ավելին, համայնքի ավագանու որոշումները համայնքի ղեկավարը կարող է բողոքարկել նաև դատական կարգով:

¹³ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 16

Իրենց հերթին, ավագանու անդամները կարող են ավագանու արտահերթ նիստ նախաձեռնել, եթե գտնում են, որ համայնքի ղեկավարի որոշումը հակասում է օրենսդրությանը կամ ավագանու նախկին որոշումներին, ընդ որում՝ վերոնշյալ նախաձեռնությունը պետք է իրականացնել համայնքի ղեկավարի որոշումները ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում: Ավագանու անդամները պետք է համայնքի ղեկավարին ներկայացնեն գրավոր բողոք՝ համապատասխան հիմնավորումներով, առաջարկելով համայնքի ղեկավարին փոփոխելու իր որոշումը: Այս ընթացքում համայնքի ղեկավարի որոշման գործողությունը կասեցվում է՝ մինչև համայնքի ղեկավարը կքննարկի և կվերանայի այն եռօրյա ժամկետում:

Համայնքի ղեկավարը կարող է ընդունել ավագանու անդամների առաջարկությունները և կայացնել որոշում դրանց համապատասխան, կամ էլ՝ կայացնել որոշում դրանք չընդունելու վերաբերյալ. երկու դեպքում էլ համայնքի ղեկավարը պարտավորվում է իր նոր որոշման մասին անմիջապես տեղյակ պահել ավագանու անդամներին: Եթե համայնքի ղեկավարը եռօրյա ժամկետում համայնքի ավագանու որոշման վերաբերյալ որևէ որոշում չի կայացնում, ապա համայնքի ղեկավարի որոշումը համարվում է չընդունված:

Այս պարագայում ավագանին ևս կարող է դատական կարգով բողոքարկել համայնքի ղեկավարի որոշումները: Սա կարևոր և գործնական նշանակություն ունեցող դրույթ է, որն օրենսդրական մակարդակով կանոնակարգում է համայնքի ավագանու և ղեկավարի փոխհարաբերությունները, ծագած խնդիրների լուծումը տեղափոխում իրավական հարթություն:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում ավագանու լիազորությունների ցանկում ներառված է համայնքի ղեկավարին անվստահություն հայտնելու վերաբերյալ որոշման ընդունման իրավասությունը, սակայն օրենքի 2016թ. դեկտեմբերին կատարված փոփոխություններից և լրացումներից հետո հանվել են համայնքի ղեկավարին ավագանու կողմից անվստահություն հայտնելու գործընթացի համապատասխան մեխանիզմներն ու ընթացակարգերը: Այդ պատճառով ստեղծվել է օրենսդրական անորոշություն. փաստորեն, համայնքների ավագանու անդամներն իրականում չեն կարող անվստահություն հայտնել համայնքի ղեկավարին (բացի Երևան, Գյումրի և Վանաձոր համայնքներից): Անհրաժեշտություն է առաջացել՝ վերանայելու և համապատասխան փոփոխություններ կատարելու օրենքում՝ հստակեցնելով և վերացնելով օրենսդրական վերոնշյալ անհամապատասխանությունը:

Տեղական ինքնակառավարման առանձնահատկությունները Գյումրի և Վանաձոր համայնքներում¹⁴

Գյումրի և Վանաձոր համայնքների ավագանիները կազմված են **33** անդամից: Երկու համայնքներում էլ ավագանու անդամների ընտրությունների ժամանակ յուրաքանչյուր համայնքի տարածքում կազմավորվում է մեկ **բազմամանդատ համամասնական ընտրատարածք**, ինչը նշանակում է, որ որպես ավագանու թեկնածուներ են առաջադրվում քաղաքական կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների ներկայացուցիչները և ոչ թե՛ անհատական ինքնաառաջադրվածները:

Տեղական ընտրությունների արդյունքում, ավագանու անդամների մանդատները բաշխվում են այն կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) ընտրական ցուցակների միջև, որոնք ստացել են կողմ քվեարկված քվեաթերթիկների ընդհանուր թվի և անճշտությունների թվի գումարի մեջ՝ կուսակցության դեպքում՝ **6%**, իսկ կուսակցությունների դաշինքի դեպքում՝ **8%** կողմ քվեարկված քվեաթերթիկներ:¹⁵

Ավագանին գործում է իր կողմից ընդունված կանոնակարգին համապատասխան՝ **նիստերի, հանձնաժողովների և խմբակցությունների** աշխատանքի միջոցով: Ավագանու խմբակցությունները ստեղծվում են նորընտիր ավագանու առաջին նստաշրջանի բացման օրը՝ հետևյալ սկզբունքին համապատասխան. ավագանու անդամների մանդատների բաշխմանը մասնակցած կուսակցության կամ կուսակցությունների դաշինքի առաջադրմամբ ընտրված ավագանու անդամներն ընդգրկվում են նույնանուն խմբակցություններում: Համայնքի ավագանու նիստերի դահլիճում վերջիններիս հատկացվում են առանձին հատվածներ:

Համայնքի ղեկավար կարող է դառնալ **ՀՀ քաղաքացիություն ունեցող** և ավագանու անդամ համարվող անձը:

Համայնքի ղեկավարի գործունեության սահմանափակումները նույնն են, ինչ ՀՀ մնացյալ համայնքներում: Նա իր գործունեությունը կազմակերպում է իր տեղակալի (տեղակալների), համայնքի գլխավոր ճարտարապետի, համայնքի ղեկավարի խորհրդականների, օգնականների, մամուլի քարտուղարի և համայնքապետարանի աշխատակազմի, հայեցողական պաշտոն զբաղեցնող անձանց, համայնքային հիմնարկների և ոչ առևտրային կազմակերպությունների միջոցով:

Համայնքի ղեկավարի տեղակալներին պաշտոնի նշանակում է **ավագանին՝** ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ, իսկ պաշտոնից ազատում՝ համայնքի **ղեկավարը**: Համայնքի ղեկավարի խորհրդականների, օգնականների, մամուլի քարտուղարի, համայնքի գլխավոր ճարտարապետի, համայնքապետարանի

¹⁴ Երևան համայնքում տեղական ինքնակառավարման առանձնահատկություններին ծանոթանալու համար տե՛ս «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը

¹⁵ ՀՀ ընտրական օրենսգիրք, հոդված 141

աշխատակազմի քարտուղարի, հայեցողական պաշտոն զբաղեցնող անձանց, առանձնացված և կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների պաշտոնի նշանակման և ազատման իրավունքը վերապահված է համայնքի **ղեկավարին**:

Գյումրի և Վանաձոր համայնքներում համայնքի **ղեկավարն ընտրվում է ավագանու կողմից**, ընտրությունն անցկացվում է նորընտիր ավագանու առաջին նիստի ընթացքում: Եթե համայնքի ավագանու ընտրության արդյունքով ընտրությանը մասնակցող կուսակցություններից (կուսակցությունների դաշինքից) մեկն ստանում է ավագանու անդամների տեղերի 50%-ից ավելի, ապա այդ կուսակցության (կուսակցությունների դաշինքի) թեկնածուների ցուցակի առաջին հորիզոնականում գտնվող անձն օրենքի ուժով համարվում է ընտրված համայնքի ղեկավար: Եթե ավագանու ընտրությունների արդյունքով որևէ կուսակցություն (կուսակցությունների դաշինք) չի ստանում ավագանու անդամների տեղերի 50%-ից ավելի, ապա համայնքի ղեկավարն ընտրվում է ավագանու կողմից գաղտնի քվեարկության միջոցով: Քվեարկությունն անցկացվում է քվեաթերթիկների միջոցով, որտեղ ներկայացված է առաջադրված բոլոր թեկնածուների ցանկը: Ավագանու խմբակցությունները կարող են իրենց կուսակցության (կուսակցությունների դաշինքի) թեկնածուների ցուցակի առաջին հորիզոնականում տեղ զբաղեցրած անձին առաջադրել որպես համայնքի ղեկավարի թեկնածու: **Մեկից ավելի** թեկնածուների դեպքում համայնքի ղեկավար է ընտրվում առավելագույն ձայներ ստացած թեկնածուն: Եթե առաջադրվել է **մեկ** թեկնածու, ապա վերջինս ընտրվում է համայնքի ղեկավար, եթե նրա օգտին կողմ քվեարկած ձայներն ավելի են դեմ քվեարկած ձայների թվից և ավելի են ավագանու անդամների ընդհանուր թվի **40%-ից**:¹⁶

Կարևոր է նաև համայնքի ղեկավարի պաշտոնանկության հարցը: Գյումրի և Վանաձոր համայնքներում համայնքի ավագանին՝ իր անդամների՝ օրենքով սահմանված թվի առնվազն մեկ երրորդի նախաձեռնությամբ կարող է համայնքի ղեկավարին **անվստահություն հայտնելու** որոշման նախագիծ ներկայացնել: Ընդ որում, անվստահություն հայտնելու գործընթացը համընկնում է համայնքի նոր ղեկավարի թեկնածուի առաջադրման գործընթացի հետ: Վերոնշյալ նախագիծը պետք է ներառի համայնքի նոր ղեկավարի թեկնածու առաջադրվող ավագանու անդամի տվյալները՝ անվստահությունը նախաձեռնող խմբի բոլոր անդամների ստորագրությունների հետ միասին:

Համայնքի ղեկավարին անվստահություն հայտնելու մասին որոշման նախագիծը ներկայացնելուց հետո՝ երրորդ աշխատանքային օրը օրենքի ուժով հրավիրվում է ավագանու նիստ, որի ժամանակ որոշվում է համայնքի ղեկավարին անվստահություն հայտնելու հարցը՝ առաջադրված թեկնածուի գաղտնի քվեարկությամբ: Համայնքի

¹⁶ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 73

ղեկավարին անվստահություն է հայտնվում այն դեպքում, երբ առաջադրված թեկնածուն ստանում է ավագանու անդամների ընդհանուր թվի ծայների մեծամասնությունը: Նորընտիր ղեկավարն իր լիազորությունները ստանձնում է մեկշաբաթյա ժամկետում: Անվստահություն հայտնելու մասին որոշման նախագիծ ներկայացնելու նախաձեռնություն կարող է իրականացվել համայնքի ղեկավարի լիազորություններն ստանձնելուց և անվստահության հարցը քննարկելուց ոչ շուտ, քան **մեկ տարի հետո**:

Գյումրի, Վանաձոր և ՀՀ մնացյալ համայնքների ՏԻՄ-երի հիմնական առանձնահատկությունները համեմատական կարգով ներկայացված են աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2. ՀՀ համայնքների ՏԻՄ-երին բնորոշ առանձնահատկությունները

Աղյուսակ 2. ՀՀ համայնքների ՏԻՄ-երին բնորոշ առանձնահատկությունները

	Գյումրի և Վանաձոր համայնքներ	ՀՀ այլ համայնքներ
Համայնքի ավագանի	<ul style="list-style-type: none"> ➤ Կազմված է 33 անդամից ➤ ընտրվում է համամասնական ընտրակարգով ➤ թեկնածուներ առաջադրելու իրավունք ունեն միայն կուսակցությունները և կուսակցությունների դաշինքները ➤ իր կազմից ընտրում է համայնքի ղեկավար ➤ կարող է անվստահություն հայտնել համայնքի ղեկավարին ➤ իր կազմում ձևավորվում են խմբակցություններ ➤ ընտրական գրավ՝ ՀՀ նվազագույն աշխատավարձի 2000-ապատիկի չափով ➤ նիստերն անցկացվում են նստաշրջանի յուրաքանչյուր ամսին՝ առնվազն 1 անգամ 	<ul style="list-style-type: none"> ➤ Անդամների թիվը կախված է համայնքի բնակչության թվից ➤ ընտրվում է մեծամասնական ընտրակարգով ➤ թեկնածուներ առաջադրելու իրավունք ունեն ինչպես կուսակցությունները (կուսակցությունների դաշինքները), այնպես էլ ընտրվելու իրավունք ունեցող անհատ անձինք՝ ինքնաառաջադրման կարգով ➤ համայնքի ղեկավարի ընտրության իրավասություններ չունի ➤ համայնքի ղեկավարին անվստահություն հայտնելու իրավասություն ունի, սակայն իրականացման մեխանիզմներն օրենքով սահմանված չեն ➤ ավագանու կազմում խմբակցություններ չեն ձևավորվում ➤ ընտրական գրավի չափը մինչև ՀՀ նվազագույն աշխատավարձի 100-ապատիկը՝ կախված համայնքի բնակչության թվից ➤ նիստերն անցկացվում են ոչ պակաս, քան 2 ամիսը մեկ
Համայնքի ղեկավար	<ul style="list-style-type: none"> ➤ ընտրվում է անուղղակի ընտրակարգով ➤ ավագանու անդամ է ➤ պետք է պարտադիր լինի ՀՀ քաղաքացի ➤ օրենքով սահմանված չէ ընտրական գրավ, քանի որ համայնքի ղեկավարը ավագանու անդամ է և նախապես վճարել է վերջինիս համար նախատեսված գրավը 	<ul style="list-style-type: none"> ➤ ընտրվում է ուղղակի ընտրակարգով ➤ ավագանու անդամ չէ ➤ կարող է չլինել ՀՀ քաղաքացի ➤ ընտրական գրավի չափը՝ մինչև ՀՀ նվազագույն աշխատավարձի 1000-ապատիկը՝ կախված համայնքի բնակչության թվից

Գրականություն

1. ՀՀ Սահմանադրություն (2015թ. փոփոխություններով)
2. Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիա
3. ՀՀ ընտրական օրենսգիրք
4. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք
5. «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք
6. «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք
7. «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենք
8. «Ավագանու կանոնակարգ», հասանելի է հետևյալ հղումով՝ <http://www.mtad.am/files/docs/322.pdf>
9. <https://www.arlis.am/>, Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգ